

ԱԻՕ ԳԱԹՐՃԵԱՆ

ՆԱՅՈՑ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹԵԱՆ
ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻՆ
ՆԱՏԱՏԱԿՈՒՄԾ ԵՒ ՄԱՆԱՑԱԾ
ՆԱՅ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ

(ՀԱՅՈՑ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹԵԱՆ 100 ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ)



ՀԱԼԷՊ
2015

ԱՐԾ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԳԱԹՐՃԵԱՆ

**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹԵԱՆ
ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻՆ
ՆԱՀԱՏԱԿՈՒԱԾ ԵՒ ՄԱՀԱՑԱԾ
ՀԱՅ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ**

**ՀԱԼԵՊ
2015**

ԻՐԱՆՈՒԿ

Յետագօտական այս աշխատութիւնը նահատակ հայ մարզիկներու վիճակուած տխուր ճակատագիրը ցոլացնող վաւերաթուղթ մըն է:

Սոյն ուսումնասիրութեամբ լուսարձակը կը կեդրոնացնենք ներկայացնելու Յայոց ցեղասպանութեան ժամանակաշրջանին Օսմանեան կայսրութեան եւ բռնակալ Թուրքիոյ տարբեր իշխանութիւններու ժամանակաշրջանին (1915-1923 թուականներուն) նահատակուած եւ մահացած մարզիկներու, որ ընդհանրապէս ոչ շատ ուշադրութեան կեդրոն դարձած է:

Յսկայ էր անոնց տարած աշխատանքը, յատկապէս Օսմանեան կայսրութեան եւ թրքական տիրապետութեան ժամանակաշրջանին անոնք դիմագրաւեցին բաւական դժուարութիւններ եւ հակառակ իրենց համեստ կարողութեան, սակայն կամքի, ոգիի եւ ազգի անկոտորում հաւատքի իբրեւ արդիւնք՝ անոնք կրցան աշխարհի ամենէն բարձր մարզադաշտերու վրայ հայու ներկայութիւնը պատուաբեր ախոյեանական արդիւնքներով ներկայացնել:

Նիւթը լուսաբանելու համար ուսումնասիրած ենք զանազան արխիւներ՝ տարբեր աղբիւրներէ, ինչպէս նաեւ՝ զանազան լեզուներով:

Այս աշխատասիրութիւնը փորձ մըն է՝ ուրուագծելու Օսմանեան կայսրութեան եւ Թուրքիոյ տարբեր իշխանութիւններու ժամանակաշրջանին

հայ մարզիկներու, ինչպէս նաեւ մարզական ակումբներու, միութիւններու, ընկերութիւններու հոլովոյթը, սկսած՝ նախացեղասպանութեան շրջանէն, հասնելով մինչեւ Մեծ եղեռն՝ մարզիկներու նահատակութիւնը կամ գաղթի ճամբուն վրայ ու արտրավայրերու մէջ անոնց մահը:

Ուսումնասիրական այս աշխատանքը առիթ մըն է խորանալու եւ ուսումնասիրելու Հայոց ցեղասպանութեան ժամանակաշրջանին նաեւ մարզական բնագաւառի ոչնչացումը, կորուստը եւ մարտիրոսացումը:

Հայ մարզաշխարհի՝ մարզիկներու եւ մարզական ակումբներու ու միութիւններու բնագաւառին կորուստը եւ բնաջնջումը լաւագոյնս կը դրսեւորեն իթթիհատական կառավարութեան սադայէլական որոշումով, Օսմանեան կայսրութեան տարածքին, Հայկական Բարձրաւանդակին եւ Փոքր Հայքի (Արեւմտեան Անատոլիոյ) հայութեան, 1915-1923 զանգուածային բռնագաղթն ու Ցեղասպանութիւնը, որոնց պատճառով կործանեցան հայկական գիւղերն ու քաղաքները, ւերուեցան, ամայացան ու պատմութեան սեւ էջին մէջ կարմիր գոյնով գրուեցան:

100 տարիներ առաջ հայ ժողովուրդը ենթարկուեցաւ թուրքին կողմէ ծրագրուած ցեղասպանութեան, այդ ճամբուն վրայ ինկան միլիոնաւոր քոյրեր եւ եղբայրներ, նահատակուեցան ու մարտիրոսացան բիւրաւոր հերոսներ՝ մտաւորականներ, կղերականներ, ազգայիններ, կրթական մշակներ, բժիշկներ, վաճառականներ, արհեստաւորներ, ինչպէս նաեւ՝ մարզիկներ:

Հայոց ցեղասպանության անժխտելի իրողութիւնը, որ մղիչ ուժ դարձաւ մեզի՝ լոյս ընծայելու «ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻՆ ՆԱՀԱՏԱԿՈՒԱԾ ԵՒ ՄԱՀԱՅԱԾ ՀԱՅ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ» գիրքին, մեզի դիտել տուաւ, որ այս աշխատասիրութեան բուն ծայրերը իրենց ամբողջական վիճակին մէջ ցարդ սպառիչ ձեւով չուսումնասիրուեցան մեր եւ երբեմն նոյնիսկ օտարին կողմէ:

Հայոց ցեղասպանութեան ժամանակաշրջանին նահատակուած եւ մահացած մարզիկներու նիւթը ձեւով մը իբրեւ յիշատակում կը հանդիպինք նախ «Հայ սկաուտ» հանդէսի «Ա. տարուան, թիւ 12, 24 ապրիլ 1920»-ի թիւին մէջ «Սգապսակ ձօն նահատակուած եւ մեռած հայ մարզիկներու յիշատակին» խորագրով: Ապա, Հայկ Դեմոյեանի, «հայկական սպորտը եւ մարմնակրթութիւնը Օսմանեան կայսրութիւնում» գիրքին իններորդ գլուխը, որ «հայկական սպորտի կորուստը»¹ վերնադիրով հրատարակուած է:

Ուստի, «ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻՆ ՆԱՀԱՏԱԿՈՒԱԾ ԵՒ ՄԱՀԱՅԱԾ ՀԱՅ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ» ուսումնասիրութիւնը ենթահող կը պատրաստէ, որ ներկայ եւ յաջորդ սերունդի մարզիկները պատրաստ լսարան ունենան: Կը յուսանք, որ սոյն աշխատութիւնը կը նպաստէ վաւերագրականօրէն հիմնաւորելու հայ մարզաշ-

1- Դեմոյեան Հայկ, «Հայկական սպորտը եւ մարմնակրթութիւնը Օսմանեան կայսրութիւնում», Հայոց ցեղասպանութեան քանգարան-ինստիտուտ, 2009, Երեւան, էջ 139-140:

խարհի հոլովոյթը հայոց պատմութեան մէջ, մանաւանդ Յեղասպանութեան, ինչպէս նաեւ՝ միատեղելու այդ օրուան հայկական մարգաշխարհի վերացումը:

Այս ուսումնասիրութիւնը կը միտի լուսաբանել հայկական մարգաշխարհի բնորոշ գիծեր՝ պարզելու համար, որ Յեղասպանութեան իբրեւ հետեւանք հազարաւոր հայ մարգիկներ եւս նախատակուած են, եւ մեծ կորուստ ունեցած է ոչ թէ հայ ազգը, այլ՝ համայն մարդկութիւնը:

Յայտնենք, թէ այս վիճակագրութիւնները ամբողջական չեն եւ կրնանք ըսել, որ հայ նահատակ մարգիկներուն թիւը շատ անելի մեծ է, ինչպէս ըսինք վերը: Այս իսկ պատճառով դոյզն իսկ յաւակնութիւն չունինք կատարեալ աշխատանք մը տարած ըլլալու, նկատի առնելով, որ մանաւանդ ուսումնասիրական աշխատանքներ միշտ ալ պակասաւոր մնացած են:

Արդարեւ, հայ ժողովուրդի պատմութեան մէջ մարգական կեանքի ծնունդը եւ ամենէն փայլուն էջերը, ձեռք բերուած նուաճումը հպանցիկ ակնարկով մը ներկայացնելով, եւ յետոյ, ինչ որ սահող տարիներուն հետ պիտի յանգէր Մեծ եղեռնի իրագործումով հայ մարգաշխարհի վերացումին:

1915-2015՝ ապրիլ 24-ի եղեռնէն 100-ամեակ մը յետոյ, 100-րդ ապրիլէ ետք, անհուն գուրգուրանքով ու գոհողութեամբ լոյս ընծայուած «**ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻՆ ՆԱՀԱՏԱԿՈՒՄԾ ԵՒ ՄԱՀԱՅԱԾ ՀԱՅ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ**» գիրքը, թող ոգեկոչումի եւ պահանջատիրութեան առիթը ըլլայ սրբադասուած նահատակներուն:

ՀԱՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԵՂԵՌՈՐ

Ա. Համաշխարհային պատերազմի (1914-1918 թուականներուն) ու անոր յաջորդած տարիներուն Օսմանեան կայսրութեան եւ քեմալական կառավարութեան՝ Արեւմտեան Հայաստանի, Կիլիկիոյ եւ կայսրութեան միւս հայաբնակ վայրերուն մէջ իրագործուեցաւ կանխամտածուած եւ ծրագրուած Մեծ եղեռնը, այլ խօսքով՝ 20-րդ դարու առաջին ցեղասպանութիւնը:

Հայոց ցեղասպանութիւն. 1915-1923 թուականներուն Օսմանեան կայսրութեան եւ քեմալական Թուրքիոյ իրագործած հայ ազգաբնակչութեան զանգուածային տեղահանութիւնն ու բնաջնջումը հայերու ցեղասպանութիւնն է, որուն զոհ գնաց 1,5 միլիոն մարդ:

Հայերու, ինչպէս նաեւ Օսմանեան կայսրութեան միւս քրիստոնեայ բնակչութեան դէմ իրա-

գործուած ցեղասպանութեան թրքական քաղաքականութեան հիմք կը հանդիսանար համախլամութեան եւ համաթրքութեան պետական դարձած գաղափարախօսութիւնները:

Իթթիհատական պարագլուխներ կայսրութեան ներքին գործերու նախարար Թալէաթ փաշան, ռազմական նախարար Էնվեր փաշան, եւ ծովային նախարար Ճեմալ փաշան, ինչպէս նաեւ երիտթրքական կուսակցութեան Կեդրոնական կոմիտէի անդամ Պեհաետտին Շաքիրի եւ ուրիշներու կողմէ կանխամտածուած եւ ծրագրուած Յայոց ցեղասպանութիւնը կը միտէր Անատոլուն մաքրել ոչ թուրք ցեղերէ եւ դարձնել զայն թուրանական հայրենիք՝ «Մեծ Թուրան» ստեղծելու, հետեւաբար այս ծրագիրը կրնար իրականանալ հայերու բնաջնջումով:

Ահմետ Ճեմալ փաշա, «Միութիւն եւ յառաջդիմութիւն» կուսակցութեան պարագլուխներէն, երիտթուրքերու ղեկավար «եռեակի» (Թալէաթ, Էնվեր, Ճեմալ) անդամ, Յայոց ցեղասպանութեան գլխաւոր յանցագործներէն էր: Արաբները «Արիւնարբու Ճեմալ փաշա» յորջորջումը տուած էին անոր:

1914-1918 տարիներուն Ճեմալ հրամանատարն էր Սուրիոյ մէջ գործող թրքական չորրորդ բանակին, ինչպէս նաեւ օսմանականութեան, հա-

մախլամութեան եւ համաթրքութեան ջատագով: Գործօն մասնակցութիւն ունեցած է Արեւմտեան Յայաստանի եւ Կիլիկեան Յայաստանի հայերու զանգուածային տեղահանման ու կոտորածին, ինչպէս նաեւ Յայոց ցեղասպանութենէն ճողորած հայ որբերը թրքացնելու աշխատանքին մէջ (Յալիտէ Էտիպի եւ Նիկար հանրմի միջոցով): Նշենք, որ դահիճ ճեմալ ճնշած է արաբներու ազգային-ազատագրական շարժումները Սուրիոյ, Լիբանանի եւ Պաղեստինի մէջ:

Իթթիհատական պարագլուխներու ծրագիրը իրականացնելու նպատակով իշխանութիւնները նախ փորձած են հայերուն զրկել դիմադրելու հնարաւորութենէ: Յայերու ցեղասպանութեան ծրագիրը իրականացուած է 3 հանգրուաններով:

Առաջին՝ պատերազմի սկիզբը բանակ զօրակոչուած 18-45 տարեկան 60 հազար հայ զինուորները, Սարիղամիշի մօտ թրքական բանակի ջախջախումէն ետք, որպէս քաւութեան նոխազ, զինաթափուած են եւ 1915 փետրուարին Էնվերի հրամանով ոչնչացուած են:

Ցեղասպանութեան երկրորդ հանգրուանը հայ մտաւորականութեան եւ հայութեան կազմակերպող ուժի ձերբակալութիւնն ու ոչնչացումն էր: 1915 ապրիլ 24-ին եւ յաջորդ օրերու Կոստանդնուպոլսոյ մէջ ձերբակալուած եւ Անատոլիայի խորքերը

աքսորուած են մօտ 800 մտաւորականներ. անոնց շարքին էին՝ Կոմիտասը, գրողներ Գրիգոր Չոհրապը (սաեւ խորհրդարանի երեսփոխան էր), Ռուբէն Սեւակը (Զիլինկիրեան), Դանիէլ Վարուժանը (Դանիէլ Չպուքքարեան), Սիամանթօն (Ատոմ Եարճանեան), Ռուբէն Չարդարեանը եւ շատ ուրիշներ: Մեծ մասը սպաննուած է:

Երրորդ հանգրուանին սկսած է տասնեակ հազարաւոր անպաշտպան կիներու, երեխաներու ու ծերերու զանգուածային տեղահանութիւնը: Որոշ վայրերու մէջ հայ բնակչութիւնը փորձած է դիմադրել:

Իրենց բնակավայրերէն բռնի տեղահանուած հայերը կարաւաններով ուղարկուած են կայսրու-



թեան խորքերը, Միջագետք եւ Սուրիա, ուր անոնց համար ստեղծուած էին յատուկ ճամբարներ: Ճանապարհին անոնք ենթարկուած են թրջական խուժանի ու քրտական աւազակախումբերու յարձակումներուն, եւ՝ կոտորուած. տեղահանուածներուն չնչին մասը հասած է ճամբարներ:

Հայոց ցեղասպանութեան վերջին արարը 1919-1922 յոյն-թրջական պատերազմի ընթացքին հայերու կոտորածն էր Թուրքիոյ արեւմտեան շրջաններուն մէջ:


Թրջական իշխանութիւններուն իրականացուցած Հայոց ցեղասպանութեան պատճառով կայսրութեան 2,5 միլիոն հայերէն զոհուած է 1,5 միլիոնը: Շուրջ 800 հազար հայեր գաղթական դար-



ծած եւ ցրուած են աշխարհի տարածքին: Արեւմտեան Յայաստանը զրկուած է իր բնիկ հայ բնակչութենէ:

Կոտորածը շարունակուած է նաեւ յետագայ տարիներուն՝ տեղափոխուելով դեպի Սուրիա: Յագարաւոր հայեր ոչնչացուած են Րաս ուլ-էյն, Տեր Չօրի, Մարկատի, Շետտատի եւ այլ սպանդա-
լոցներու մէջ:


Պատմութեան ընթացքին ինչպէս հայերը, նոյնպէս ալ արաբները ճաշակած են Օսմանեան կայսրութեան բարբարոսութիւնը եւ՝ համաթուրքութեան զոհը դարձած. ուստի Մեծ եղեռնի բերած սովի եւ արհաւիրքի օրերը, որուն պատճառով հայը երբ ապաստան գտաւ արաբական,



յատկապես Սուրիոյ արաբ ժողովուրդին մօտ, ճակատագիրի բերումով անոնք ինքնաբերաբար դարձան հացի եղբայրներ:

Հայոց ցեղասպանութեան ժամանակաշրջանին, սկսելով նախացեղասպանութեան երկու արարներէն, Թուրքիա 8 հոկտեմբեր 1895-ին իր հրէշային ծրագիրը գործադրութեան դրաւ՝ ջարդելու ամբողջ հայութիւնը: 1896-ին կոտորածը լայն ծաւալ ստացաւ, որուն զոհ գացին մօտաւորապէս 300,000 հայեր:

1908-ի թրքական սահմանադրութենէն ետք հայերը կարծեցին, թէ այլեւս ամէն բան փոփոխեցաւ. սակայն 1909-ին սկսաւ Ատանայի ջարդը, որ շուտով տարածուեցաւ Կիլիկիոյ միւս քաղաքնե-



րուն մեջ:

Արդարեւ, 1915-1922 Մեծ եղեռնը պատճառ դարձաւ, որ զանազան միջոցներով սպաննուին հայ ազգի զաւակները անխտիր, աշխարհի երեսն սրբելու համար մարդկութեան պատիւ բերող, բազմազան շնորհքներով օժտուած ազգ մը, սկըսելով մտաւորականութենէ, կղերականներէ, բժիշկներէ, կրթական մշակներէ, գիտնականներէ, ուսուցիչներէ, կուսակցականներէ, քաղաքական եւ դիւանագիտական անձերէ, շարունակուելով ամենէն համեստ բնակիչէն մինչեւ զինուորականը, արիեստաւորն ու արուեստագետը եւ ուրիշներ ու ուրիշներ, հասնելով մինչեւ մարզական բնագաւառին ծառայող նուիրեալներուն:

Օսմանեան կայսրութեան մեջ մարզական կեանքի զարգացման եւ հայկական ֆութպոլային (ոտնագնդակ) խումբերու սկզբնաւորման ժամանակաշրջան կարելի է նկատել 1908 թուականը՝ Երիտթուրքերու յեղաշրջման հետ կապուած, որովհետեւ սուլթան Ապտուլ Յամիտ Բ.-ի օրով մարզանքի տարբեր բնագաւառներով զբաղիլը խստիւ արգիլուած էր օրէնքով եւ եւթակայ՝ խիստ պատժամիջոցներու: Սկայն, վերոնշեալ արգելքներու վերացումէն ետք, Պոլսոյ, Չմիւռնիոյ (Իզմիր) եւ կայսրութեան այլ քաղաքներու մեջ ձեւաւորուեցան առաջին հայկական ֆութպոլային խում-




1908-ին հիմնադրուած Պոլսոյ «Արարս» հայկական ֆութպոլի խումբը՝ 1910-ին:



Իզմիրի հայ որսորդաց ակումբի ֆութպոլային խումբ, «Մարմնամարզ», 1910-ին:



Սամաթիայի «Ասիական» մարմնամարզական խումբը,
«Մարմնամարզ», 1912-ին:



«Արծի» մարմնամարզական ակումբը Տրապիզոնի մեջ,
«Մարմնամարզ», 1912-ին:


«Տորք», «Րաֆֆի», «Արաքս», «Արտաւազդ», «Տիտան», «Վահագն», «Պարթեւ» մարզական միութիւնները:

Տեղին է նշել նաեւ այլ մարզական ակումբներ եւ միութիւններ, ինչպէս՝ «Արծիւ», «Շանթ», «Յայ ԶԲԸՄ Մեսիսի» մասնաճիւղի, Տէր Զօրի պատանեկան, Ատանայի «Կիլիկիա», Տարսուսի Ս. Պօղոս վարժարանի ֆութպոլային խումբերը, Զաճնոյ «Յամագասպ» մարմնամարզական ակումբի ինքնապաշտպանական խումբը եւ այլ միութիւնները: Ինչպէս նաեւ զանազան մարզական տեսակի երկսեռ մարզիկներ պատրաստած են:

Կարելի է ըսել, որ Կ. Պոլիսէն Վան, Տրապիզոնէն Ատանա հայկական տասնեակ մարզական ակումբներ ու սկաուտական կազմակերպութիւններ հիմնուեցան:

Հայկական մարզական ակումբներն ու մարզիկները նշանակալի աւանդ ունեցած են Օսմանեան կայսրութեան մարզական կեանքի զարգացման պատմութեան մէջ: Հայկական շուրջ 100 մարզական ակումբներ գործած են ամբողջ Օսմանեան կայսրութեան տարածքին:

Յետաքրքրական է, որ 1 մայիս 1911-ին կազմակերպուած են առաջին «Հայկական Ողիմպիական Խաղեր»-ը (Նաւասարդեան խաղերու օրինակով): Երկրորդը՝ 20 մայիս 1912-ին: Երրորդը՝



Աբլեք Մարտիրոս Գույումճեան հայկական ողբմայիական խաղերուն իր մասնակցութիւնը կը բերէ

16 յունիս 1913-ին, Նախագահութեամբ հայ երգի անմահ վարպետ Կոմիտաս վարդապետի, որ Նա-
եւ կը կատարէ խաղերու մրցանակաբաշխումը:
Զորորդ Ռդիմպիականը՝ օգոստոս 1914-ին, կանգ
կ'առնէ Ա. Աշխարհամարտին պատճառով:

1911-1914 թուականներուն յաջորդաբար տե-
ղի ունեցած Ռդիմպիական խաղերուն մասնակցած
են հայկական մարզական բոլոր ակումբներն ու
միութիւնները:

Դարեր շարունակ հայ ազգը Օսմանեան կայս-
րութեան եւ քեմալական թուրքիոյ մէջ տուած է
հարիւրաւոր անուանի եւ ախոյեան մարզիկներ,
որոնք իրենց մարզական բնագաւառներու համա-
պատասխան ախոյեանութիւններու տիրացած եւ



իրենց նպաստը բերած են ոչ միայն իրենց ազգակիցներուն, այլ համայն մարդկութեան եւ մասնաւորապէս՝ Թուրքիոյ: Անոնք ամէն ջանք թափած են իրենց մարզական տաղանդը ցուցաբերելու եւ ամէն հոգուով ախոյեանութիւն ձեռք բերելու:


Անոնց նուիրաբերումն ու ծառայութիւնը սահմաններ չէ ունեցած: Առանց խտրութիւն դնելու պատկանելիութեան:

Անոնք կատարած են իրենց քաղաքացիական եւ մարզական պարտականութիւնները լիովին: Անոնք մնացած են պատնէշի վրայ եւ եղած են լաւագոյն ու փնտռուած մարզիկները՝ նախանձ արթնցնելով թուրքին մօտ:

Հայ մարզիկները Թուրքիոյ մէջ գործած են իբրեւ օրինաւոր հպատակներ Օսմանեան կայսրութեան, կատարած են իրենց պարտականութիւնները յաջս պետութեան եւ թրքական հայրենիքին, մատուցած են իրենց մարզական ծառայութիւնները:

Անոնցմէ շատերը արժանացած են պետական բարձրագոյն շքանշաններու եւ բարձր պատիւներու՝ օսմանեան հայրենիքին մատուցած իրենց ծառայութիւններուն զանազան բնագաւառներու մէջ բաւական պատուաբեր արդիւնքներ ձեռք բերած ըլլալուն համար:

Հայոց ցեղասպանութեան ժամանակաշրջա-



նին հայ մարզիկներէն շատերը ղրկուած են կռուի դաշտ՝ ի խնդիր օսմանեան հայրենիքի պաշտպանութեան եւ հոն քաջաբար թափած են իրենց արիւնը:

1911-1914 Նաւասարդեան խաղերը ու հանդէսները նպաստած են ազգային զարթօնքին ու մշակութային-հասարակական շարժման վերելքին:


Թուրքիոյ մէջ գործող հայ մարզիկներուն մեծամասնութիւնը բնականաբար եղած է համապատասխան հայկական ակումբներու անդամ, ինչպէս նաեւ ազգային եւ կուսակցական ղեկավարներ, յեղափոխականներ, ազգային ազատագրական շարժումի ռահուիրաներ եւ զոհուողներ:

Շաւարշ Զրիսեանը եղած է մեծ մանկավարժ,




գրող, հրապարակախօս, լրագրող, Հայ մարմնակրթական ընդհանուր միութեան (ՅՄԸՄ) հիմնադիրներէն, Օսմանեան կայսրութեան մէջ մարզական առաջին՝ «Մարմամարզ» (1911-1914) հանդէսին հիմնադիրը: «Մարմամարզ»-ի հրա-

տարակումով հայ մարզական կեանքը կը մտներ
 նոր փուլի մէջ: Առաջին թիւով իսկ Զրիսեան կ'ար-
 տայայտուէր. «Մեր նպատակը պիտի ըլլայ մարդ
 պատրաստել, ու մարդէր են, որ կը պակսին մե-
 զի»: Իսկ 1912 ապրիլ 1-ին Զրիսեան «Մարմնա-
 մարզ» պատկերազարդ հանդեսի մէջ «Յայ կնոջ
 զարթնումը» յօդուածով կը խօսի հայ կնոջ մար-



զական կեանքի մէջ ներգրաւելու մասին, քանի որ
 ֆիզիքական դաստիարակութիւնը կարելոր էր
 առողջ սերունդ ունենալու համար:

Այս մեծ հայորդիին ջանքերով պատմութեան
 մէջ առաջին անգամ 1912-ի ամրան երկու հայ
 մարզիկներ՝ Վահրամ Փափազեան եւ Մկրտիչ
 Մկրեան, մասնակցած են Սթոքհոլմի (Շուէտ) մէջ
 կայացած 5-րդ Միջազգային Ողիմպիական խա-




Հինգերորդ Ողիմպիական խաղերը Սթոքհոլմի մեջ, աջէն երկրորդը՝ Օսմանեան կայսրութեան թէքն աթլէթի խումբի անդամ, վազող Վահրամ Փափագեանն է:

ղերուն՝ առաջին անգամ ըլլալով Օսմանեան կայսրութիւնը ներկայացնելով Ողիմպիականին: Օսմանեան պետութիւնը գումար չյատկացուց եւ երթելէկի հետ կապուած ամբողջ ծախսը հայկական համայնքը իր վրայ վերցուց:

Շ. Քրիստեանը այդ ատեն ըսած է, որ տակաւին Թուրքիոյ ոչ մէկ ներկայացուցիչ մասնակցած է մարզական որեւէ ձեռնարկի: Թող մերինները Շուէտի մէջ վերջինը ըլլան: Կարելորդ այն է, որ մեծ ազգերու հետ ասպարեզ մտնեն հայերը, որոնք շուրջ 30 տարի Եւրոպայի մէջ յայտնի են որպէս հալածուած ազգ: Ժամանակն է, որ արդէն հակառակը ըսեն, եւ որ քաղաքակիրթ աշխարհը իմանայ, ճանչնայ մեզ եւ մեր նուաճումները:

Սթոքհոլմի խաղերուն մասնակցած 28 երկիր-

ներու 2541 մարզիկներու շարքին եղած են Թուրքիան ներկայացընող երկու մարզիկներ՝ Մկրտիչ Մկրեանը եւ Վահրամ Փափագեանը: Ողիմպիականի հետ հետաքրքրական իրողութիւն մը կայ, որ արձանագրուած է: 1909-ի Կիլիկիոյ մէջ թուրքերու



կազմակերպած հայերու շարդին պատճառով շուկտացիները մասնակցող երկիրներու դրօշակներու շարքին մէջ դիտումնաւոր չեն կախած օսմանեան դրօշը: Այս մասին անտեղեակ հայ մարզիկները բողոքած են ու կազմակերպիչները տեղադրած են թուրքիոյ դրօշը: Արդարեւ, հայ մարզիկները այնուհետեւ զոջացած են իրենց ըրածին համար:

Արդարեւ, թրքական մամուլին մէջ յօդուածներ կը հրապարակուէին հայ մարզիկներու յաջողութեան մասին, ուր բացայայտ կ'անհանգստանային թուրքերը, որ եթէ հայերը կը յաղթեն, կը նշանակէ անոնք ֆիզիքապէս ուժեղ են իրենցմէ:

Երիտթուրքերու հայաջինջ քաղաքականու-



թիւնը բռնակալական Թուրքիոյ մշտապէս իրականացուող հայահալած գիծի անմիջական ու կատաղի շարունակութիւնն էր: Այդ քաղաքականութեան հիմքի մէջ դրուած էին այսպէս կոչուած շարժառիթ «Պատճառներէ, իւրատեսակ տնտեսական ու քաղաքական նկատառումներ: Թրքական բռնակալ կառավարողները չէին հանդուրժեր, որ Օսմանեան կայսրութեան մէջ հպատակ քրիստոնեայ ժողովուրդները, անոնց շարքին՝ նաեւ հայերը, կը հանդիսանային քաղաքակրթութեան, տընտեսական, մշակութային ու մարզական յառաջընթացի կրողները:

Չետեւաբար 1913-1914 երիտթրքական կառավարութիւնը մեկուսացուց հայ յաջող մարզիկները, փակեց հայկական ակումբները:

Խորաթափանց ու հեռատես, իր ժողովուրդի համար արշալոյսներ երագող մանկավարժն ու անոր համախոհ մտաւորական երիտասարդութիւնը, հակառակ այս համազգային նշանակութիւն ունեցող աշխատանքին, միաժամանակ ահ ու դողով կը զգային թրքական Գորշ գայլին մահասարսում ոտնաձայները:

Այսուհանդերձ, Թուրքիոյ մէջ գործող հայ մարզիկները անբաժան չմնացին հայ ժողովուրդի գողգոթայէն: Ջարդարար թուրքը չիսնայեց հայ մարզիկը, անոր, որ ամբողջական նուիրումով ծառա-

յաճ էր հայրենիքին եւ թուրք ժողովուրդին: Անոնք
Թուրքիոյ ամբողջ տարածքին համախմբօրէն
դատուեցան եւ նահատակուեցան:

1915-1920 բազմաթիւ հայ մարզիկներ դարձան
ցեղասպանութեան զոհեր, զոհ դարձաւ նաեւ
«Մարմնամարզ»-ի խմբագիր Շաւարշ Զրիսեան,
որմէ ետք պարբերականը դադրեցաւ լոյս տեսնե-
լէ:

Եղեռնի առաջին օրերուն երեւելի հայ մարզիկ-
ները իրենց արիւնակիցներուն հետ միասին ձեր-
բակալուեցան, բանտարկուեցան, տարագրուե-
ցան եւ անմարդկայնօրէն չարչարուեցան թուրք
ճիւղալային ձեռքերով, պարզապէս հայածին ըլ-
լալնուն եւ հայ անունով մկրտուած ըլլալնուն հա-



մար: Անոնք արժանապատուութեամբ մաս կազմեցին հայ նահատակներու մեծ փաղանգին: Այս բոլորը եղան որպէս թրջավայել վարձատրութիւն՝ հանդէպ հայ մարզիկներուն, որոնք դարձած էին ամբողջ Թուրքիոյ մարզական ոլորտի հիմնական սիւները:

Հայ մարզիկներուն ձերբակալութիւնները թուրք իշխանութեան կողմէ ծրագրուած եւ կազմակերպուած էր այնպէս, ինչպէս եղած էր հայ ժողովուրդի ընտրանիինը եւ ամբողջ հայ ժողովուրդինը:

Նահատակ հայ մարզիկներու ամբողջական եւ ճշգրիտ վիճակագրութիւնները չունինք: Մեր տրամադրութեան տակ ունինք հատ ու կենտ գրութիւններ, ինչպիսին է Թեոդիկի, Գրիգորիս Ծ. Վրդ. Պալաքեանի, Յակոբ Սարգիսեանի, «Մարմնամարզ» հանդէսի, «Հայ սկաուտ» հանդէսի եւ կարգ մը այլ աղբիւրներ:


Վերոնշեալ անձերն ու հանդէսները եւ ուրիշներ, որպէս մասնակից եւ ականատես Հայոց ցեղասպանութեան ու մանաւանդ իբրեւ վերապրող, թուղթին յանձնած են իրենց յուշերը, տեսածն ու լսածը՝ մարդակերպ գազան թուրքերու կատարած զազրելի ոճիրները եւ բարբարոսութիւնները: Մեծ դժուարութիւններով հաւաքած են նահատակ երեւելի անձնաւորութիւններու կենսագրութիւնները

եւ՝ թուղթին յանձնած:

Մարզական շարժման մէջ ունեցանք հազարաւոր այլ մարզիկներ, որոնք զոհ գացին Եղեռնին, սակայն դժբախտաբար շատ վտիտ են մեզի հասած անոնց կենսագրութեան վերաբերեալ տեղեկութիւնները:


Այժմ կը ներկայացնենք նահատակ մարզիկներուն ցանկերը եւ կենսագրութիւնները՝ համաձայն մեր ուսումնասիրութեան:

- ՇԱԽԱՐԾ ԲՐԻՍԵԱՆ. Ծնած է 22 յուլիս 1886-ին, Պոլսոյ Պէշիկթաշ արուարձանին մէջ: Յաջորդաբար յաճախած է Մաքրուհեան, Պարտիզակի Ամերիկեան բարձրագոյն, Պերպերեան եւ Ռոպերթ



գուլեն հաստատութիւնները: 1906-ին կ'անցնի Փարիզ եւ կը յաճախէ «Լիսէ ժանսոն» մարմնամարզական վարժարանը՝ ուսուցիչ ունենալով Տեպոնէ փրոֆեսորը: Հագիւ վեց ամիս հետեւած դասընթացքներուն՝ կ'անցնի Լոնտոն (Անգլիա): Այս տեղափոխման մէջ կրնայ իր դերը ունեցած ըլլալ Ռոպերթ գուլենի իր ամերիկեան կրթութիւնը: Լոնտոնի մէջ կը մնայ երկուքուկէս տարի. կ'աշակերտէ Սանտոմի եւ վկայուելով 1909-ին՝ կը վերադառնայ Պոլիս: Քրիսեան Երոպայէն Պոլիս կը վերադառնայ բարձր կորովով եւ նոր գաղափարներով: Կ'ուզէ նախաձեռնել մարմնակրթութեան կազմակերպման ու տարածման գործին: Կը նուիրուի գըլխաւորաբար ուսուցչական ասպարէզի՝ դասաւանդելով մարմնամարզութիւն:

1911-ին կը ձեռնարկէ «Մարմնամարզ»-ի հրատարակութեան: Յակոբ Ծ. Սիրունի (Ճոլուէան), ոչ մարզիկ մը, սակայն՝ մարզական շարժման քաջալեր հանդիսացած մտաւորական մը, իր յուշերուն մէջ կը պատմէ, թէ ինք թելադրած է Քրիսեանի՝ լոյս ընծայել նման հրատարակութիւն մը: Մեր ուսումնասիրութենէն կ'ենթադրենք, որ «Նոր Դըպոցի» հիմնադիր եւ տնօրէն Յոհաննէս Թ. Հինդըլեանն ալ մաս ունեցած ըլլայ այս թերթին հիմնադրութեան մէջ, որուն իր գործօն աշխատակցութիւնը չզլացաւ՝ ըլլա՛յ ինքնագիր յօդուածներով,



Մեզիրե (Մամուրեթույ-Ազիզ, ներկայիս Էլազոր), Կեդրոնական վարժարան. աշակերտները
մարզաճաճի պահում (Արթիւր Վահե Հայկ, «Ֆտարբերդ եւ ամոր ոսկելէն դաշտը»,
Նիւ Եորք, 1959)


ըլլա՛յ թարգմանութիւններով:

1914-ի սկիզբը Քրիստեան թիֆոյի երկարատեւ հիւանդութեան պատճառով չի կրնար լոյս ընծայել իր թերթը: Չորս ամսուան ակամայ դադարէ ետք Դ. տարուան Ա. թիւը լոյս կը տեսնէ 1914-ի մայիսին: Բ. թիւէն ետք կը դադրի (յունիս):

1912-ի ապրիլին, Բ. Ողիմպիականին նախօրեակին, Քրիստեան խմբագրական ակնարկին մէջ կը գրէ. «Յայ Ողիմպիականը ո՛չ հայ աղքատին, ո՛չ հայ մտաւորականին եւ ո՛չ ալ հայ տգէտին համար է, այլ՝ ՅԱՆՈՒՐ ՅԱՅՈՒԹԵԱՆ: ... գաղափարական բոլոր դրօշներու տակ ապրողներ թող գան տարւոյն մէջ օր մը միանալ գեղեցիկ գաղափարի մը դրօշին տակ, ու ողջագուրուիլ՝ սիրտերնին միեւնոյն զգացումներով բաբախուն»²:

1911 յուլիսին կ'առաջարկէ, որ կազմուի Պոլսոյ համար ֆութպոլի հայկական լիկ մը, որովհետեւ 1911 փետրուարին եթէ հազիւ երկու-երէք ֆութպոլի խումբեր կային, անոնց թիւը 18-ի բարձրացած է եւ հետզհետէ բարձրանալու նշաններ կան: 1914-ի սկիզբը վեց ակումբներու մասնակցութեամբ կը կազմուի ֆութպոլի հայկական լիկ մը: Եղածը զինք կը խանդավառէ, սակայն չի գոհացներ: Իր իտեալը կը մնայ Պոլսոյ հայ մարմնա-

2.- «Մարմնամարզ», Դ. տարի, թիւ 7 (1912 ապրիլ 15), էջ 122:



ՀԱԻԱՐԵ ԲՐԻՍԵԱՆ

մարզականը:

Քրիստեան Պոլսոյ մէջ ամէն տեղ է: Մարմնակըրթանքի ուսուցիչ զանազան դպրոցներու մէջ, նոր ակումբներու ջանադիր՝ զանազան արուարձաններու մէջ, դասընթացքներ եւ դասախօսութիւններ կազմակերպող ու նախաձեռնող՝ զանազան սրահներու մէջ: Հայուհիներ հետեւելով իր մարմնամարզական դասընթացքին՝ Ուսումնական խորհուրդէն կը ստանան համապատասխան վկայական³:

«Մարմնամարզ»-ի մէջ խմբագրականներով եւ առանձին յօդուածներով կը շեշտէ անհրաժեշտութիւնը ներմուծելու կամ ընդգրկելու մարմնակըրթանքը դպրոցական ուսումնական ծրագիրին մէջ:

Սկաուտական շարժումը հայ կեանքի մէջ տարածելու հեռանկարով «Մարմնամարզ»-ի մէջ լոյս կ'ընծայէ ծրագիր-կանոնագիր մը «Պոյ-սկաուտը եւ իր կեանքին նպատակը - Հայ պոյ սկաուտներ» խորագիրով, զօր ապա գրքոյկի կը վերածէ:

1912-ի ամրան սկիզբը, օգտուելով իր ամառնային արձակուրդէն, կը մեկնի Եգիպտոս: Հասած օրն իսկ ներկայ կ'ըլլայ Աղեքսանդրիոյ Պօղոսեան երկրորդական վարժարանի աշակերտութեան մարմնամարզական հանդեսին: Կը հրճուի իր սիր-

3.- «Մարմնամարզ», Գ. տարի, քիւ 7 (1911 օգոստոս), էջ 223:

տը՝ ի տես պարզուած տեսարանին եւ իրագործումներուն:

Աղեքսանդրիա գտնուած շրջանին հետամուտ կ'ըլլայ կազմելու մարմնամարզական ակումբ մը: Յատուկ կոչով մը տեղւոյն երիտասարդութիւնը խորհրդակցական նիստի մը կը հրահիրուի: Զրիսեան իր կարգին քաջալերական ելոյթ մը կ'ունենայ հոն, ուր ընդհանուր խանդավառութեան մէջ, շուրջ 40 հոգի, իբրեւ գործօն անդամ, կ'արձանագրուի տեղւոյն վրայ կազմուած «Կամք» մարմնամարզական ակումբին:

Զրիսեանի մեծագոյն նպատակն էր յառաջացնել հայ մարմնամարզական միութիւն մը, որ համախմբէր Պոլսոյ եւ գաւառի մարզական բոլոր ակումբները: Թէեւ այս առնչութեամբ աշխատանք կը տարուի, սակայն չ'իրականանար:

Պէտք է նշել, որ 1910-ին Զրիսեան միայն 25 տարեկան էր: Արդարեւ, երբ ակնարկ մը նետենք նուազ քան հինգ տարիներու ընթացքին Զրիսեանի կատարած նուաճումներուն վրայ, հոն պիտի տեսնենք. հայկական ողիմպիական առաջին խաղերու կազմակերպիչ, ֆութպոլի հայկական ախոյեանութեան առաջին մրցաշարքի հիմնադիր, «Մարմնամարզ» թերթի խմբագիր, առաջինը, Զինդլեանի եւ Յակոբեանի հետ, հայկական սկստական շարժումի նախաձեռնող, «Մարմ-

նամարզ»-ի մէջ հայ սկաուտական կանոնները գրող, իգական սեռը քաջալերող, որպէսզի անոնք աթլետիզմ կիրարկեն, Աղեքսանդրիոյ «Կամք» մարմնամարզական շարժումի ստեղծման մղիչ ուժ⁴:

Վերոնշեալ պատճառներուն եւ շատ աւելիին համար Շաւարշ Բրիսեան կը նկատուի ԶՄԸՄ-ի տեսլականի ռահուիրան: Տպաւորիչ է այն, որ Բրիսեան շատ արագ բազմաթիւ նուաճումներ արձանագրած է իր երիտասարդ տարիքին՝ 24-29:

24 ապրիլ 1915-ի չարաշուք գիշերուան ընթացքին առաջին ձերբակալուածներուն մէջ է: Շաւարշ Բրիսեան Պոլսոյ Կեդրոնական բանտը մտաւորական դաշնակցականներու խմբակին մէջ է Արամ Անտոնեանի, Էտկար Ակնունիի (Խաչատուր Մալումեան), Սիամանթոյի, Դանիէլ Վարուժանի, Ռուբէն Չարդարեանի եւ այլոց կողքին:

200-է աւելի մտաւորականներու խումբը Զայտար փաշայի կայանէն շոգեկառքով ճամբայ կ'ելլէ: Շոգեկառքը կ'անցնի Նիկոմիդիա (Իզմիթ), Պելեճիկ (Պիլեճիկ), Էսկիշեհիր քաղաքները եւ Էսկիւրիէն (Անգարա) երկու կայան առաջ կանգ կ'առնէ: Զոսկէ կը բաժնուին Այաշի աքսորավայրը ու-

4.- «Մարզիկ» մարզական ամսաթերթ, Ա. տարի, թիւ 3 1980, Պէյ-րուք: Արտաշէս Տէր Խաչատուրեանի յօդուածը, էջ 3-5:

ղարկուելիք անձերը, որոնց մէջ է Շաւարշ Քրիստեան: Կառքերով կը տարուին Այաշ, ուր կը հասնին ապրիլ 27-ի երեկոյեան մօտ: Կը բանտարկուին զօրանոցին մէջ: Այաշի բանտարկեալներէն ոմանք պատերուն վրայ ձգած են արձանագրութիւններ: Քրիստեան գրած է հետեւեալը. «Շաւարշ Քրիստեան, ապրիլ 14, 1915»⁵: 14 ապրիլը հին տոմարով է: Նոր տոմարով կ'ըլլայ ապրիլ 27: Արձանագրած է Այաշ հասնելու թուականը:

Այաշի բանտի եւ Շաւարշ Քրիստեանի մասին յատկապէս որոշ տեղեկութիւններ մեզի հասած են բժիշկ Անդրանիկ Նազգաշեանէն: Բժիշկը կը գրէ. «ամէն առաւօտ մարմնամարզի դասընթացք մըն ալ ունէինք:

«Շաւարշ Քրիստեան, այդ կտրիճ եւ վառվռուն տղան, կը կառավարէր մեզ: Երեք կարգի վրայ կը շարուէինք եւ մէ'կ, երկու', երե'ք... շարժումները կ'ընէինք:

«Շաւարշ Քրիստեան կը յանդիմանէր սխալ շարժումներ ընողները, որոնցմէ ամէնէն երեւելին Շահրիկեանն էր:

«Շահրիկեան», կը պոռար անդիէն մարմնամարզի դասատուն, եւ կարող իրաւագետը, յանցանքի մէջ բռնուած տղու մը պէս, անմիջապէս

5.- Մարգիսեան Յակոբ, «Հայկաշէն տարեգիրք», Ա. տարի, 1922, Կ. Պոլիս, էջ 323:

նոքերն ուղղելու կ'աշխատեր»⁶:

1915-ի օգոստոսի կիսուն Այաշի աքսորականներեն մաս մը կը փոխադրուի Էսկիւրիի (Անգարա) բանտը: Կ'ենթադրուի, որ այդ խմբակին մէջ ըլլայ նաեւ Շաւարշ Զրիսեան: Խմբակը կը միացընեն Էսկիւրիցի հայերու կարաւանի մը եւ քաղաքէն 4-5 ժամ հեռու գտնուող ձորի մը մէջ կը սպաննեն բոլորն ալ:

Զրիսեան բացառութիւն մըն էր եւ կարելի չէ կրկնօրինակել զայն, բայց ան հազիւ 20 տարիքը թեւակոխած՝ ատակ եղած է հայ կեանքին մէջ հըսկայական փոփոխութիւններ ներմուծելու, անոր նահատակութեամբ ոչ թէ հայ ժողովուրդը, այլ համայն մարդկութիւնը մեծ կորուստ ունեցաւ:

- ՀԱՅԿ ՃՈՂՈՒԵԱՆ. - ՀՄԸՄ-ի հիմնադիրներէն Յ. Ճ. Սիրունիի եւ նշանաւոր մարմնամշակ-լուսանկարիչ Գրիգոր Ճոլոլեանի (Արաքս) կրտսեր եղբայրը:


Հայկ ծնած է 1893-ին: Նախնական եւ երկրորդական կրթութիւնը ստացած է Պոլսոյ Էսայեան, Կեդրոնական եւ Արդի վարժարաններուն մէջ:

Ան փոքր տարիքէն նուիրուած է մարզական կեանքին: Մասնաւորաբար հետեւած է ֆութպոլի

6.- «Հայ մտատրականներու ձերբակալութիւնը եւ Այաշի բանտը», Պէյրութ, Տպ. Տօնիկեան, 1969, էջ 33:

Եւ դաշտային խաղերու: Եղած է «Արաքս» եւ «Տորք» մարզական միութեանց սիւներէն մէկը: Մասնակցած է պատերազմէն առաջ տեղի ունեցած «Հայկական Ռդիմպիական խաղեր»ուն, ուր եղած է ֆութպոլի աստղերէն:

Զօրակոչի սկիզբը զինուորագրուելով իբրեւ երկրաչափի օգնական՝ թրքական բանակին մէջ




ծառայած է Նախ Կարին, ապա Սեբաստիա (Սվազ):

Հայկ Ճոլլլեան 1700 հայ զինուորներու հետ միասին զոհ գնաց Սեբաստիոյ մէջ, Շար Գըշլայի կոտորածին, թրքական բանակի մէջ ծառայող հայ զինուորականութեան սպանդի ժամանակ:

- **ՄԵԼԵՈՆ.**- Մասնակցած է Մուշ-Սասուն շրջանի ինքնապաշտպանութեան եւ Թարգմանչաց վանքի կռիւին, այդ օրերուն պատանի հերոս Մելքոն իր քաջարի կեցուածքով կրցած էր դրսեւորել անձնագոհութեան ճշմարիտ արժէքը: Սկաուտ Մելքոն իբրեւ սուրհանդակ երբ կը գործեր, սահմանին վրայ կը ձերբակալուի եւ մահուան կը դատապարտուի Մուշի մէջ: Երբ Մելքոն նահատակուեցաւ ընդհամենը, 15 տարեկան էր:

- **ԵՐՈՒԱՆԴ ՆՇԱՆԵԱՆ.**- Զիմնադիր Սագրի գիւղի «Սասուն» մարմնամարզական միութեան: Իր



անխոնջ ջանքերուն շնորհիւ «Սասուն» միութիւնը 1914-ի Պոլսոյ միջազգային լիկի մէջ ֆուլթալի

ախոյեան հանդիսացած էր:

Նահատակուած է Նոյնպէս Մեծ եղեռնի օրերուն:


- **ԳԱՆՈՒՍ ԱՐԻԱՆԵԱՆ**.- Ետի Գուլէի որբանոցի սաներէն, խոնարի նկարագիրի եւ խոնարի ծագումի տեր երիտասարդ մը: Ան լաւ ֆուլթպո-



լիստ էր, լուռ գործունեութեամբ մարզիկ, չէր ուզեր ուրիշներէ փոխ առնուած յոյսերով ապրիլ:

Գործէն ետք Գում-Գաբուի եւ Ենի-Գաբուի աղքատ երիտասարդութիւնը կը համախմբեր եւ

7.- Չշփոթել հայ ժողովուրդի ազգային-ազատագրական շարժման առաջին առիւծասիրտ նուիրեալներէն Գալուստ Արխանեանի (1860-1905, Մնձուրի Առիւծ) հետ:



անոնց ֆութպոլ կը սորուեցներ, կը քաջալերեր զանոնք՝ զնդակներ հայթայթելով: Վերջապես, կարելին կ'ըներ իր ազդեցութեան տակ հաւաքելու կարելի եղածին չափ շատ թիւով երիտասարդներ, մարզանքի մաքուր ոգին եւ խաղերու մէջ իրարու հանդէպ ազնիւ գտնուելու բնութիւնը արմատացընելու համար:

Արիսանեան քաջ գիտակցելով, որ ազգի մը զօրութիւնը իր երիտասարդութեան մէջ կը կայանայ, ուստի իր կարելին կ'ըներ, որ իր ազգին ծառայէր:

Գալուստ աղքատ երիտասարդներէ կազմած էր ֆութպոլի «Որբանոց» եւ «Արծիւ» խումբերը:

Գալուստ Արիսանեան յետագային գոլէճական Վահրամ Փափազեանին հետ կազմած էր Վոսփորի «Արտաւազդ» մարմնամարզական ակումբի Կէտիկ փաշայի մասնաճիւղը:

1914-ին, պատերազմի հռչակումէն ետք, երբ հայութեան ճակատագրին խոր եւ արիւնոտ փոսերը անմեղներու դիակները կը լեցնէին, թուրք ճիրաններէն չէր խուսափեր բնականաբար մարզիկ կամ որբն ալ: Արդարեւ, Գալուստ Արիսանեանն ալ իր ժողովուրդին ճակատագրին հետեւելով՝ կը ղրկուի Սուրիոյ Տեր Չօրի անապատները, անոր հետ էր նաեւ այլ հայ որբ փոքրիկ մը՝ ազնիւ Գալուստը, որ շատ լաւ գիտէր՝ ի՞նչ ըսել է անտեր անտիրական որբ մը ըլլալ, ուստի տարագրու-

թեան մէջ ամէն տանջանք ու տառապանք աչք առած, հակառակ անոր որ ինք արդէն ուտելու չոր հաց չունէր, ամէն միջոցի դիմելով, պատառ մը հաց կը ճարեր այդ փոքրիկին համար: Բայց ափսո՛ւս, դժբախտաբար Տէր Չօրի մէջ Գալուստն ալ մարդանման գազաններու՝ թուրքերու կեր դարձաւ եւ նահատակուեցաւ:

- **ԽԱՉԻԿ.**- Վանեցի, հայկական բանակի մաքրամաքուր զինուորներէն, ընկերներուն կողմէ Առիւծ մակդիրը ստացած: Նշանաւոր ֆութպոլիստ էր, զոհ գնաց հայ եւ թուրք պատերազմին:

- **ՅՈՂԱՆՆԵՍ ԳՈՐԵԱՆ (Օվիկ).**- Պոլսոյ «Ռո-



պերթ» գլխի ուսանողներն էր: Ան լաւագոյն աթ-
լէթ եւ ֆութպոլիստ էր: Ա. Յամաշխարհային պա-
տերազմին զոհ գնաց Թիֆլիսի մէջ:

- **ՎԱՐՂԵՎԱՌ ԵՍՓՈՒՃԵԱՆ.**- Բնիկ Յաճընցի:
Տարսոնի Ամերիկեան գլխի բարձրագոյն կար-



գի ուսանողներն եւ նոյն ուսումնարանի մարզա-
կան ոգին: Յայ մարմնակրթական աշխարհին մէջ
կարելոր դերակատար:

Վարդեվառ, աքսորուելով. Նահատակուած է
Տեր Չօրի մէջ:

- **ԱԼԵՏԻՍ ԱՅՃԵԱՆ.**- Չարգացած եւ ուսեալ
երիտասարդ մը: Ծնած է 1892-ին, Արաբկիր: Նախ-

նական եւ երկրորդական կրթութիւնը ստացած է Խարբերդի ֆրանսական գոլէճին մէջ, որմէ ետք անցած է Կ. Պոլիս եւ աւարտած՝ օսմանեան համալսարանի ուսողութեան ճիւղը, 1914-ին: Հակառակ արաբկիրցի ըլլալուն՝ սատարած էր Խարբերդի մարզական շարժման եւ Պոլսոյ մէջ մաս կազմած էր «Տորք» մարմնակրթական միութեան: Ան Պիթիսի մէջ բնակութիւն հաստատելով՝ իբրեւ ուսուցիչ կ'աշխատէր թրքական վարժարանի մէջ: Նահատակուած է 1915-ին, տեղահանութեան:

- ՂԱԶԱՐՈՍ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ.- Կարնոյ (Էրզուրում) Սանասարեան վարժարանի շրջանաւարտներէն: 1908-էն սկսեալ Վարդանեան (կամ Մեսրոպեան) վարժարանէն ներս կը դասաւանդէ Ղազարոս Գույումճեան, իսկ 1911-1915՝ Չմշկածագի կից ամբողջութեամբ հայաբնակ թաղամասի Իւչպեկի (կամ Ուչբակ) Ներսէսեան վարժարանին մէջ, որ անցած էր Միացեալ Ընկերութեան հովանաւորութեան տակ: Ղազարոս, կը բարեփոխէ դպրոցին ուսումնական ծրագիրը, ալ նիւթերու կարգին մարզանքին եւս կարելորութիւն տալով: Մարզանքի ուսուցիչ Ղազարոսի կեանքին անդրադարձողները անսահման երախտագիտութեամբ կ'արտայայտուին իր մասին:

Ղազարոս Գույումճեան զոհ կ'երթայ Մեծ

եղեռնին:

- ԶԱՅՐՄԱՅՐ-ՊՕՂՈՍ ԱՅՃԵԱՆ .- Ճնած է մարտ 1897-ին, Սկիւտար, Իճնատիէ: Նախնական կրթութիւն ստացած է թաղի ազգային վարժարանին մէջ, աւարտելէ ետք յաճախած է Նոր Դպրոց, ուրկէ շրջանաւարտ ելած է 1914-ին՝ իբրեւ վարժարանին առաջին եւ յաջողագոյն շրջանաւարտներէն մէկը: Ուշիմ, աշխատասեր, պարտաճանաչ, քաղաքավար, ազնիւ սիրտ ու հոգի կը կրէր եւ



առաքինութիւններու մարմնացումն էր: Սիրած ու յարգած է իր ընկերներն ու դաստիարակները: Վարժարանին մէջ մասնաւոր յատկութիւն ցոյց տուած է գեղարուեստի եւ մարմնակրթանքի: Եր-

կար ատեն մաս կազմած Է Կոմիտաս վարդապետի երգչախումբին եւ իբրեւ սիրողական նկարիչ՝ արտադրած Է լաւ նկարներ:

Պօղոս Այճեան եղած Է Շաւարշ Զրիսեանի աշակերտներէն, մեծ դերակատար՝ Նոր Դպրոցի եւ այլ դպրոցներու մէջ սկաուտական շարժման տարածման մէջ: Մասնակցած Է նաեւ «Տորք» մարմնակրթական միութեան:

Համաշխարհային պատերազմի առաջին տարին պաշտօնավարած Է իբրեւ ուսուցիչ Նոր Դպրոցի մէջ: Ապա թրքական բանակին մէջ ծառայած Է իբրեւ թարգման եւ մինչեւ Ռումանիոյ լեռները մեկնեցաւ ծառայելու: 1917-ին ան վերադարձաւ ֆիզիքապէս քայքայուած ու այլեւս չկարողացաւ վերագտնել իր առողջ կազմը՝ յաւիտենապէս բաժնուելով իր սիրելիներէն:

- ԳԵՈՐԳ ԹԵՐԾԻՍԱՆԵԱՆ.- Առաջին Հայկական Ռդիմպիական խաղերու կազմակերպիչներէն:

- ՊՕՂՈՍ ԶԵՆՆԵԱՆ.- Ծնած Է 1886-ին: Ղազարոս Գույումճեանի քեռորդին: Ան շրջանաւարտ եղած Է Պոլսոյ Մխիթարեան հայրերու վարժարանէն եւ Պուրսայի շերամաբուծութեան մասնագիտական դպրոցէն: Կալուածատեր ընտանիքի գաւակ, սակայն կը նախընտրէր զիջիլ ամսականով



ծառայել գաւառի հայ սերունդի դաստիարակութեան: Ուսուցչական պաշտօն վարած է Վարդանեան վարժարանի մէջ: 1912-1913 տարեշրջանին Ներսէսեան վարժարանը կ'անցնի վերակազմուած Միացեալ ընկերութեան հսկողութեան տակ: Այստեղ կը սկսի դասաւանդել Պօղոս Չէննէան: Ան սկառուտական շարժման ներկայացուցիչներէն եղած է: 1910-1915 տարիներուն գործակցած է Ղազարոս Գուլումճեանի հետ, կրթական եւ սկառուտական մարզերուն մէջ:

Պօղոս Չէննէան կը սպաննուի 1915-ին Մեծ եղեռնին⁸:


8.- Համբարձում Գասպարեան, «Չմշկածագ եւ իր գիւղերը», Պոստոն, Տպ. Պայքար, 1969, էջ 150, 154:

- ԳԵՈՐԳ ԶԵՐԵՍԹԷՃԵԱՆ.- Մագրի գիւղին «Սասուն» մարմնամարզական միութեան հիմնա-



դիրներէն եւ ֆուլթալիստ նշանաւոր յետսապահ. զոհ գացած է Մեծ եղեռնի պատերազմին:

Վերոնշեալ անուններէն զատ կ'արժէ նշել, որ բնականաբար կան նահատակուած բազմաթիւ մարզիկներ, որոնց անունները դժբախտաբար անհասանելի եղած են մեզի: Օրինակ, Սերաստիոյ «Պարթեւ» ակումբի 1900-ականներու թերեւ արեւելքի մարզիկներուն մեծ մասը զոհ դարձաւ Հայոց ցեղասպանութեան, կամ՝ Այնթապի «Համա-



Թեբեւ արկէի «Պարբեւ» ակումբի անդամները, Սեբաստիա, 1900-ականները:
Այս նարդիկներուն մեծամասնութիւնը գոի գնաց Հայոց ցեղասպանութեան

գասպ» ֆութպոլի խումբի անդամներ⁹, որոնք
տոյնպես իրենց այն ընկերներուն ճակատագիրը
ունեցան եւ գոհ գացին Մեծ եղեռնին:

1914-1918 Ա. Համաշխարհային պատերազմի
տարիներուն ստեղծուած աւանդութիւնները Մեծ
եղեռնի պատճառով ընդհատուած են, սակայն



Այնթապի «Համագասպ» մարմնամարզական ակումբի
մարզիկները, Հալէպ, 1923-ին:

Մուտրոսի զինադադարէն ետք, 1918 տոյեմբեր 1-
ին ստեղծուած Է Հայ մարմնակրթական ընդհա-
նուր միութիւնը (ՅՄԸՄ), որուն հիմնադիրները
եղած են՝ Գրիգոր եւ Լեւոն Յակոբեան եղբայրնե-
րը, Տիգրան Խոյեանը, Հայկ Ճիգմեճեանը, Վահ-

9.- «Պատմութիւն Այնթապի ՀՅ դաշնակցութեան» (1898-1922),
Պարսումեան Յ. Գեորգ, տպագրութիւն Տիգրիս, 1957, Հալէպ: Մի-
րան Գաթրոճեանի յօդուածը, էջ 194-200:

րամ Ս. Փափագեանը, Տիգրան Խոյեանը, Գարլօ Շահինեանը, Յակոբ Ճ. Սիրունին, Բիւզանդ Կեօզիւպօյիւքեանը եւ Գրիգոր Մերճանֆը. վերոյիշեալները կազմեցին առաջին խարիսխը՝ իբրեւ կեդրոնական վարչութիւն, քանի մը բացականեր կցելով իրենց, ինչպէս՝ Յ. Յինդլեանը, Ժ. Խորասանճեանը եւ այլն: Միութեան նպատակը զինադադարէն ետք վերադարձող հայութեան, յատկապէս երիտասարդութեան եւ որբերու համախմբումն էր: Տպագիր օրկանը «Յայ Սկաուտ» հանդէսն էր (խըմբագիր՝ Կարօ Ուշագլեան):

Տեղին է նշել, որ Յայ մարմնակրթական ընդհանուր միութիւնը իր ստեղծման առաջին օրն իսկ արդէն զօրաշարժի ենթարկած էր իր շարքերը՝ խնամելու համար հազարաւոր հայ փոքրիկ որբեր: Ղալաթիոյ (Կալաթա) եկեղեցւոյ շրջափակին եւ Սկիւտարի մէջ անոնք հիմնեցին ԱՌԱՋԻՆ ՁՐԻ ԴԵՂԱՐԱՆԸ եւ ՇԱՐԺՈՒՆ ՅԻԲԱՆԴԱՆՈՅԸ, ՅՄԸՄ-ականներ այդ աշխատանքին համար լծուած են եւ ամէն ջանք ի սպաս դրուած՝ այդ գործի յաջողութեան: Երկու ամսուան ընթացքին 1500 գաղթական հիւանդներ խնամուած են: ՅՄԸՄ-ի առաջին Կեդրոնական վարչութեան առաջին տեղեկագիրը 1 նոյեմբեր 1918-էն 1 հոկտեմբեր 1919 ժամանակաշրջանը կ'ընդգրկէ: Որբահաւաքի եւ խնամատարութեան աշխատանքի համար առա-


ջին իրագործումը եղած է, երբ 1920-ին Ս. Չատկրուան տոսին առիթով, Պոլսոյ թաղերը ողողուած էին տարազաւոր ԶՄԸՄ-ական «**Նոր Բողոքներ**»-ը: Օրուան բաժնուած քոքարթներու վերտառութիւնն էր՝ «**Յիշենք Մեր Որբերը**»: Զայ ժողովուրդը յիշեց իր որբերը եւ իր կարելին ըրաւ:

ԶՄԸՄ վերականգնեց աւանդոյթը եւ 1919-1922 կազմակերպեց Զայկական Ռդիմպիական խաղեր: Այսօր ԶՄԸՄ-ը աշխարհի տարածքին ունի 100-է աւելի մասնաճիւղեր:

Վերջապէս, Զայոց ցեղասպանութեան ժամանակաշրջանին, հայ մարզիկներէ բացի, բնաջնջումի եւ կորուստի մատնուեցան բազմաթիւ հայկական մարզական ակումբներ, մարզական ըն-



Որբեր ՀՄԸՄ-ի շարքերուն մէջ մարզանքի պահուն



Մեծ եղեռնին ետք որբեր մարզաճարի պահում

կերութիւններ, մարզական կառոյցներ, մարզական հանդէսներ, խմբագրատուններ, մարզադաշտեր եւ այլն: Կողոպտուեցան եւ իւրացուեցան առաջնակարգ մարզիկներու ախոյեանական արժեքաւոր շքանշանները, մետալները, բաժակները ու վաւերաթուղթերը, նաեւ՝ մարզական սարքաւորումները:

Թրքական բռնակալութեան ցեղասպանական քաղաքականութիւնը, ինչպէս քաջ գիտենք, ընդգրկեց Օսմանեան կայսրութեան բոլոր հայաբնակ վայրերը: Յետեւաբար նաեւ հազարաւոր հայ մարզիկներու բնաջնջումը իրագործուեցաւ թէ՛ իրենց բնակած վայրերուն մէջ, թէ՛ բռնագաղթի ճանապարհներուն եւ թէ՛ աքսորավայրերու մէջ, Միջագետքի անապատներուն մէջ, յատկապէս՝ Տեր Չօր, Րաս ուլ-էյն, Մարկատէ, Շատտատէ: Մագապուրծ փրկուածները բնակութիւն հաստատած են տարբեր երկիրներու մէջ:

Հայոց ցեղասպանութեան ժամանակաշրջանին նահատակուած կամ այդ ճամբուն վրայ այլ-այլ պատճառներէ մահացած մարզիկներու թուային պատկեր մը յայտնաբերելու համար թուաբանական նոյնիսկ պարզ հաշիւ մը կրնայ երեւան հանել անոց թիւը մօտաւորապէս: Այսպէս, օրինակ, հայկական շուրջ 100 մարզական ակումբներ երբ կը գործէին ամբողջ Օսմանեան կայսրու-

Թեան տարածքին եւ այդ ակումբներէն ամէն մէկը եթէ 20 մարզիկ ունենար (տրուած թիւէն աւելին կար) արդէն ընդհանուր գումարը կ'ընէ 2000. սակայն մեր ուսումնասիրութենէն ի յայտ կու գար, որ թիւը ասկէ մեծ էր եւ անոնց կէսէն աւելին ստոյգ նահատակուած է, բայց անոնց անունները, ակումբները, անգտանելի են մեզի:

«Հայոց ցեղասպանութեան ժամանակաշրջանին նահատակուած եւ մահացած հայ մարզիկները» ուսումնասիրական այս աշխատանքը եզրակացնելով՝ կ'ընդգծենք, որ երիտթուրքերուն կազմակերպած դժոխային սպանդի զոհեր դարձան արեւմտահայ մարզիկները նաեւ, որոնք ոչ միայն մեծ անանդ ունին հայ ժողովուրդի հարուստ մարզաշխարհին մէջ, այլեւ վիթխարի ծառայութիւններ մատուցած էին Թուրքիոյ մարզական աշխարհի զարգացումին:

Մեր ուսումնասիրութիւնը կատարելագործելու համար թէեւ հետազոտական մեծ աշխատանք տարինք՝ պրպտելով բազմաթիւ փաստաթուղթեր, լուսանկարներ, մարզական պարբերականներ եւ այլ անտիպ աղբիւրներ, ինչպէս նաեւ՝ Մեծ եղեռնէն վերապրողներու կարեւորագոյն վկայութիւններ, որ երեւան հանենք բազ-

մաթիւ նահատակ մարզիկներու անուններ, սակայն դժբախտաբար կարելի չեղաւ մարզիկներու անհատական կենսագրութիւններու առումով աւելի ամբողջական անուանացանկ մը երեւան յայտնաբերել արխիւներու չգոյութեան պատճառով:

Մեր կարգին, կրցանք աչքէ անցընել նահատակ երեւելի եւ կամ այլ անձնաւորութիւններու կենսագրութիւնները, որոնք թուղթին յանձնուած էին վերապրողներու կամ յետագային անոնց պարագաներուն կամ հարագատներուն կողմէ՝ իբրեւ զոհ ու ակաւատես Մեծ եղեռնին, որ թուղթին յանձնուած է բորենակերպ թուրքերու կատարած լրբութիւններն ու ոճրագործութիւնները:

Այս ուսումնասիրական աշխատանքը եզրակացնելով՝ պետք է ըսել, որ Օսմանեան կայսրութեան մէջ մարզական աշխարհի մեծ զատագով Շաւարշ Քրիստեանն ու անոր հայ ընկերակիցները 1915-ի Հայոց ցեղասպանութեան ժամանակաշրջանին թուրքերը բոլորն ալ անխնայ եւ անխտիր սպաննեցին: Այսպէս վարձատրած են երախտամոռ օսմաննե-

րը, նաեւ հայ ականաւոր մարզիկները:

Արդարեւ, թուրքը 1.5 միլիոն զոհ խլած է հայ ժողովուրդի զաւակներէն, ու մինչեւ այսօր կը մերժէ խոստովանիլ իր ոճիրը եւ հատուցում կատարել զոհին:

Հայոց ցեղասպանութիւնը ըլլալով Հայ դատի մէկ բաղադրիչ օղակը, հետեւեալբար, Հայ դատի պայքարը ամենօրեայ ապրում է, հայօրէն ապրելու, հայօրէն գործելու ու կամք պահանջող հաւատք: Ուստի, Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի առիթով «Հայոց ցեղասպանութեան ժամանակաշրջանին նահատակուած եւ մահացած հայ մարզիկները» աշխատութիւնը թող պահանջատիրութեան մէկ օղակը սեպուի, իսկ միւս կողմէ՝ սրբադասուած նահատակներու, այս պարագային նահատակ, թաղուած ու անթաղ, անուանի թէ անանուն մարզիկ սուրբ նահատարներուն թող ծաղկեպսակ ըլլայ:

Մենք կը շարունակենք աշխատիլ յանուն ճշմարտութեան, յիշողութեան եւ արդարութեան:

ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ ԱՂԲԻՒՐՆԵՐ

- Անդրեասեան Վազգէն Ա., «Հա-
զարիապատում», Ա. հատոր, Պէյ-
րուք, տպ. Կ. Տօնիկեան, 1985:

- «Արեւելք» օրաթերթ, 1949-1963,
Հալէպ:

- Գասպարեան Համբար-
ձում, «Չմշկածագ եւ իր գիւղերը»,
Պոստոն, Տպ. Պայքար, 1969:

- «Գեղարդ Սուրիահայ Տարե-
գիրք» (նուիրուած սուրիահայ գա-
ղութի մարմնամարզական շարժու-
մին), Դ. գիրք, 1991, Հալէպ:

- Դեմոյեան Հայկ, «Հայկական
սպորտը եւ մարմնակրթութիւնը Օս-
մանեան կայսրութիւնում», Հայոց
ցեղասպանութեան քանգարան-ինս-
տիտուտ, Երեւան, 2009:

- Թէոդիկ, «Յուշարձան նահա-
տակ մտաւորականութեան», Բ.
տպագրութիւն, ապրիլ 24, 1985:

- Թիւրքիւնճեան Կարօ, «Հ.Մ.Ը.Մ.
եւ Ապրիլ 24» (Նուիրուած Եղեռնի
90ամեակին), հրատարակութիւն
Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչու-
թեան, 24 Ապրիլ 2005, Լիբանան:

Անթիլիաս, 2005:

- «Հայ մտաւորականներու ձերբակալութիւնը եւ Այաշի բանտը», Պէյրութ, Տպ. Տօնիկեան, 1969:

- «Հայ սկաւուտ» կիսամեայ հանդէս, 1919-1922, 1929-1930, 1934-1935, Կ. Պոլիս, Փարիզ:

- ՀՄԸՄ-ի առաջին կեդրոնական վարչութեան առաջին տեղեկագիրը, 1 նոյեմբեր 1918-էն-1 հոկտեմբեր 1919:

- «Մարզիկ» մարզական ամսաթերթ, հրատարակութիւն Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան, 1980 փետրուարէն մինչեւ օրս, Պէյրութ:

- «Մարմնամարզ» հանդէս, 1911-1914, Կ. Պոլիս:

- Պալաքեան Գրիգորիս Ծ. Վրդ., «Հայ գողգոթան. դրուագներ հայ մարտիրոսագրութենէն», Բ. հատոր, Բ. տպագրութիւն, «Պերլինէն դէպի Տէր Զօր», Պէյրութ. 1977:

- Պարսունեան Յ. Գեորգ, «Պատմութիւն Այնթապի ՀՅ Ռաշնակցութեան» (1898-1922), տպագրութիւն Տիգրիս, 1957, Հալէպ:

- Սարգիսեան Յակոբ, «Հայկաշէն տարեգիրք», Ա. տարի, 1922, Կ. Պոլիս:

ԱԻՕ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԳԱԹՐՃԵԱՆ

**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹԵԱՆ
ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻՆ
ՆԱՀԱՏԱԿՈՒԱԾ ԵՒ ՄԱՀԱՑԱԾ
ՀԱՅ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ**

Տպագրութիւն «Արեւելք» տպարան
Յեղիսակի Ե-նամակ avokat1970@hotmail.com
ՀԱԼԷՊ - ՍՈՒՐԻԱ - 2015

